

# ՌՈՒՍԻԱ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԹՈՒՐԿԻԱՅԷՆ

## ՑԱՄԱՔԱՅԻՆ, ՕԴԱՅԻՆ, ՆԱԻԱՅԻՆ ԽԱՐԻՄԻՆԵՐ 400 ՀԵՔԹԱՐԻ ՎՐԱՅ ԵՒ ԱՆԱԱՀՄԱՆ ԹԻՒՈՎ ԶՕՐՔԵՐ ԵՒ ՆԱԻԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

### ԹՈՒՐԿԵՐԸ ԿԸ ՎԱԽՆԱՆ ՈՐ ԿԱՐՍ ԵՒ ԱՐՏԱՀԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ԱԼ ՊԱՀԱՆՁՈՒՄ

ՊՈԼԻՍ, 13.— Նեղուցներու մէջ խարխիսներ հաստատելու ուստի պահանջը զօրաւոր ընդդիմութեան մը հանդիպեցաւ թուրք հանրային կարծիքին և մամուլին մօտ:

Մօնթրէոյի համաձայնութեան պայմանաժամը լրանալէն քանի մը օր առաջ և այնպիսի վայրկեանի մը երբ որոշ գրգռութիւն կը տիրէ թուրք ներքին ճակատին վրայ՝ ուստի ծանուցագիրը կ'առաջարկէ Նեղուցներու թուրքեռուս միասնական պաշտպանութեան դրութիւնը: Այս առաջարկը շատ չտարբերիր անցեալ տարի եղած առաջարկէն: Պատերազմի ընթացքին թուրք և գերման համագործակցութեան շուրջ «Փրաւտա»-յի մէջ հրատարակուած գրութիւնը, ցոյց կուտայ թէ հակաթուրք նոր պայքար մը շղթայաղերժուած է: Հանրաձայնօթ լրագրող Հիւսէյին Ճահիտ Եալչըն) որ սերտ յարաբերութեան մէջ է թուրք կառավարական շրջանակներու հետ) կը գրէ. «Խափանարարական և պարտուողական միջոցներով մեր ներքին ճակատը խորտակելու փորձեր կատարելէ յետոյ՝ ուստի մեծապէս բողոք ժամուսն կ'ուզեն փոփոխութեան ենթարկել Մօնթրէոյի համաձայնութիւնը»:

#### Ռուսիա կ'ուզէ մասնակցիլ Նեղուցներու հսկողութեան

ՊՈԼԻՍ, 13.— Կը հաղորդուի թէ ներկայիս թուրք կառավարութիւնը քննելու վրայ է սովիէթ ծանուցագրին շրջանակէք պատասխանը: Կը տեղեկացուի նոյնպէս թէ Սովիէթ Միութիւնը Մօնթրէոյի համաձայնութեան վերաբնութիւնը պահանջելէ զատ կ'ուզէ նոյնպէս մասնակցիլ թուրքիոյ հետ Տարտանէլի պաշտպանութեան հսկողութեանը:

Պաշտօնական շրջանակները տակաւին լռութիւն կը պահեն սովիէթ ծանուցագրի պարունակութեան շուրջ՝ որ «քաղաքական ուսմը» մը կը նկատուի:

Կիսապաշտօնական շրջանակները կը յայտնեն թէ իր պատասխանին մէջ թուրքիա պիտի պնդէ երկկողմանի բանակցութեանց անկարելիութեանը վրայ որովհետև Մօնթրէոյի համաձայնութիւնը կը պահանջէ որ ստորագրող բոլոր պետութիւնները մասնակցին վերաբնութեան ժողովին:

#### Թուրքիա կը վախճայ հաւանական բարդութիւններէ

ԼՈՆՏՈՆ, 13.— Բոլոր դիտողները համաձայն են ըսելու համար թէ ուստական նախաձեռնութիւնը կենսական կարեւորութիւն ներկայացնող դէպք մըն է միջազգային յարաբերութեանց մէջ:

Թրակական սեսակէսը այն է որ գլխաւորաբար պէտք է հսկել որ Համաձայնութեան վերաբնութիւնը ուստական նշանակութիւն ստանալէն չձառայի: Թուրքիոյ վրայ՝ որուն այլ առաջադիւնք ալ ներկայացուած են, պահանջելով Կարս եւ Արսահան հայկական նահանգները:

#### Ռուսիա խարխիսներ կը պահանջէ

ԱՆԿԱՐԱ, 13.— Ռուսական ծանուցագիրը կը պահանջէ 400 հեկտարի ցամաքային, օդային եւ նաւային խարխիս մը, ինչպէս նաեւ օդակայան մը յարդարելու եւ անահման քիւով ուստական զօրքեր եւ նաւեր պահելու իրաւունք՝ Նեղուցներու մէջ:

Սեւ ծովը գոցուած պիտի ըլլայ ոչ—սեւ ծովեան երկիրներու պահեստակարան նաւերուն առջեւ: Համաձայնութիւնը պիտի հաստատուի թուրքիոյ կատարելապէս անկարելիութեան եւ Նեղուցներու հաստատակց պաշտպանութեան սկզբունքով:

#### Ինչ կ'ըսէ Սովիէթ ծանուցագիրը

ՄՈՍԿՈՒԱ, 13.— Մոսկուայի ծայնասփիւռը հաղորդեց թէ ամսոյս Տիւն Ռուսիա ծանուցագիրը մը յանձնեց Անգլիոյ կառավարութեան, պահանջելով Մօնթրէոյի դաշնագրին վերաբնութիւնը) Փոքրամի որոշումներուն համաձայն: Ռուսիա հետեւեալ առաջարկները ներկայացուցած է.

1. Նեղուցները պէտք է տեւականապէս բաց ըլլան բոլոր երկիրներու առևտրական նաւերուն առջև:
2. Նեղուցները բաց պէտք է ըլլան Սև ծովեան երկիրներու պատերազմական նաւերուն առջև:
3. Միւս երկիրները մասնաւոր պարագաներու միայն պիտի կրնան իրենց պատերազմական նաւերը Նեղուցներէն անցնել:
4. Նեղուցներու իրաւական դրութեան հաստատումը կը վերաբերի թուրքիոյ և Սև ծովեան միւս տէրութեանց:
5. Թուրքիա և Ռուսիա) որպէս ամենէն աւելի շահագրգռուող Նեղուցներու ազատութեան և պահպանման) պէտք է միասնաբար կազմակերպեն պաշտպանութիւնը:

Ռուսական ծանուցագիրը դիտել կուտայ որ Մօնթրէոյի համաձայնութիւնը համապատասխան չէ ներկայ պայմաններուն) ինչպէս ցոյց տուած վերջին պատերազմը: Հակառակ այդ համաձայնութեան — կ'ըսէ ծանուցագիրը — գերմանական և իտալական ազգամասնաւոր Սև ծով անցան կուտելու համար Ռուսիոյ դէմ:

#### Թուրքերը կը մերժեն

ՊՈԼԻՍ, 13.— Ֆրանսական գործակալութեան թղթակիցը Անտրէֆիօթ կը հեռագրէ.

«Թուրք քաղաքական օրջանակները միաձայն են՝ անընդունելի նկատելու Նեղուցներու շուրջ ներկայացուած սովիէթ ծանուցագիրը: Որքան ալ Անգլա-րայի կառավարութեան պատասխանը տակաւին հրատարակուած չէ) կը կարծուի թէ ժխտական պիտի ըլլայ) մասնաւորաբար Էրզ և Տրք պարբերութիւններու հանդէպ) որոնցմէ առաջինը կը վերաբերի վերաբնութեան մասնակցելիք պետութեանց և երկրորդը Տարտանէլի և Վոսփորի միասնական պաշտպանութեան: Կը նկատուի թէ այս առաջարկները ոչ միայն դէմ են թուրքիոյ շահերուն) այլ նաև իր քաղաքականութեան էական սկզբունքներուն) որ հիմնուած է գոյութիւն ունեցող դաշնագիրներու յարգանքին և բոլոր ազգերու գերիշխանութեան իրաւունքին վրայ:

«Թուրք մամուլը կ'ըմբռնէ կացութեան ծանրութիւնը և մասնաւորաբար կը շեշտէ Նեղուցներու հսկողութեան ուստի մասնակցութեան առաջարկին մերժումը: Ընդունել այդ առաջարկը — կ'ըսեն թուրք թերթերը — կը նշանակէ բանալ երկրին դռները օտար զինուած ուժերու առջև»:

Թուրք դահլիճը երէկ՝ երկուշաբթի ամբողջ օրը ժողով գումարած է՝ պատրաստելու համար թրքական պատասխանը) որ այսօր՝ չորեքշաբթի պիտի յանձնուի Մոսկուայի կառավարութեան: Իրիտ. կառավարութիւնը տակաւին չի ունեցած Մօնթրէոյ ստորագրող տէրութեանց հետ: